ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"09" 06 2017 թ. N 02/23/3573-17

<<Ինֆորմացիոն ազատության կենտրոն>>
ՀԿ նախագահ Լ. Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 2017 թվականի հունիսի 2-ի
N 319-ի 7 գրության

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2015 թվականի հունիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում աշխատել է 439 հաստիքային աշխատակից, որից 2-ը՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, 3-ը՝ փորձագետ:

Նախարարության վերակազմակերպման արդյունքում՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմում 2016 թվականի հունիսի 1-ի դրությամբ աշխատել է 77 հաստիքային աշխատակից, որից 1-ը՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, իսկ 2-ը՝ փորձագետ:

Միաժամանակ հայտնում ենք, որ 2017 թվականի հունիսի 1-ի դրությամբ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմում աշխատում են 87 հաստիքային աշխատակից, որից 2-ը՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, իսկ 11-ը՝ փորձագետ:

Փորձագետների թվաքանակը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրով և վարչապետի հանձնարարականներով նախարարությանը որոշակի նոր գործառույթների ամրագրմամբ, որոնց իրականացումը հնարավոր չէր ապահովել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության մարդկային ռեսուրսներով:

ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին>> N 29 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը որդեգրեց ՀՀ մարզերի

համաչափ զարգացման և տարածքների մրցունակությունը բարձրացնելու քաղաքականություն: Առավել արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականցնելու համար, բազմաթիվ հետազոտական և գնահատման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ կարիք էր առաջացել ստեղծել վերլուծական կենտրոն:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին հանրապետությունում մեծ թափով իրականացվում են կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգերի ներդրման խոշորամասշտաբ ծրագրեր, որոնք միտված են ամբողջովին փոխելու ՀՀ աղբահանության համակարգը և ներդնելու Եվրոպական չափանիշներին համապատասխան աղբահանության համակարգեր և մշակույթ: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից հանրապետության մարզերում համակարգվում, վերահսկվում և իրականացվում են ԿԿԹԿ ենթահամակարգեր ներդնելու մեծածավալ աշխատանքները, որոնք ենթադրում են ինչպես վարչական բնույթի աշխատանքներ՝ հանդիպումներ խորհրդատուների հետ, ինստիտուցիոնալ և իրավական խնդիրների վերհանում, համապատասխան փաստաթղթաշրջանառության ապահովում, ծրագրերի բնապահպանական պետական փորձաքննությունների իրականացման ապահովում, շահագրգիռ գերատեսչությունների հետ աշխատանք և ներկայացված հաշվետվությունների մանրակրկիտ վերլուծություն, այնպես էլ դաշտային-հետազոտական աշխատանք՝ գործող աղբավայրերի գույքագրում, դրանց փակման աշխատանքների վերահսկում և այլն:

Հարգանքով՝

Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ